Դասընթացի անվանումը (կրթամոդուլի դասիչը)	**ՀՈՂԱՅԻՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐ (6ԳԴՋ2025, 6ԳԴՋ2025Ա)**
ECTS կրեդիտ	3+1 կրեդիտ
Դասընթացի պատասխանատու դասախոս	Գյուրջյան Ն.Խ., ասիստենտ, տ.գ.թ.
Ուսումնառության վերջնարդյունքներ	Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի. *(գիտելիք և իմացություն)* • ներկայացնել ՀՀ հողային ֆոնդը, • թվարկել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների տեսակները, առանձին-առանձին ներկայացնել դրանցից յուրաքանչյուրը, • ներկայացնել ՀՀ-ում գործող իրավունքների գրանցման կարգը, • ներկայացնել իրավունքների փոխանցման ձևերը, սահմանել դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները, • ներկայացնել գույքի վերաբերյալ տեղեկատվական տվյալների հավաքման և կառավարման մեխանիզմները: *(կարողություններ)* • կիրառել հողային կադաստրի վարման առանձնահատկությունները, • գործնականում իրականացնել գույքի նկատմամբ իրավունքների տեսակների բնութագրում և տարանջատում, • մասնակցել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման գործառույթներին, • կատարել գույքի վերաբերյալ տեղեկատվության հավաքում և կառավարում: • կատարել մոնիթորինգ անշարժ գույքի վերաբերյալ հավաքված տվյալների հիման վրա:

Դասընթացի թեմատիկ ծրագիր	• Հողային կադաստրի առարկան և մեթոդները: Պետական հողային կադաստրի նպատակը: ՀՀ հողային ֆոնդը, նպատակային նշանակության բնութագիրը: • Անշարժ գույքի հաշվառումը: Հողամասերի և շինությունների հատակագծերի հաստատում: Հողակադաստրային տեղեկատվությունը և դրա ստացման եղանակները: • Գույքի նկատմամբ իրավունքների տեսակները՝ սեփականության իրավունք, օգտագործման իրավունք, իրավունքների սահմանափակումները: • Գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցում: • Հողամասի գրավը, սերվիտուդը, հիպոթեքը, գույքային այլ իրավունքներ: • Հողամասի կառուցապատման իրավունքի պետական գրանցման առանձնահատկությունները: Իրավունքների գրանցման հաջորդականությունը և առաջնահերթությունը:
Դասընթացի գրականության ցանկ	• Անշարժ գույքի կատարմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի ձևը և դրանում տվյալների լրացման առանձնահատկությունները հաստատելու մասին օրենք, 17 նոյեմբերի 2011 թ., N320: • Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքը, 17 նոյեմբերի 2011թ., N318: • Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին, Հայաստանի Հանրապետության օրենք: • Եզեկյան Ա.Ս., Էֆենդյան Պ.Ս. Հողային կադաստր, Երևան, 2008: • ՀՀ Հողային օրենսգիրք: • ՀՀ քաղաքացիական օրենսգիրք: • ՀՀ օրենքը, Նոտարիատի մասին: • ՀՀ Հողային օրենսգիրք: • ՀՀ Կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 09.02.2012թ., Գույքի նկատմամբ իրավունքների ու սահմանափակումների պետական գրանցման դիմումների և փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով ներկայացնելու, կարգը հաստատելու մասին թիվ 165-Ն հրաման: • Ստեփանյան Ս.Շ., Հովհաննիսյան Վ.Փ., Գրիգորյան Ա.Լ. Անշարժ գույքի էկոնոմիկա և կառավարում:

	• www.cadastre.am • www.arlis.am • www.irtek.am

Ինժեներական գեոդեզիայի
ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ Թովմասյան Ս.Վ.